


Մանուկներու Սուրբ Գիրքը կը ներկայացնէ

Որդին




Written by: Edward Hughes
Illustrated by: Alastair Paterson; Lazarus
Adapted by: Ruth Klassen; Sarah S.
Translated by: Most Rev. Prof. Varant Zareh Seropian
dedicated to my Son Lordling Zareh Varant
funded by: Zareh Seropian & Sons Foundation
special thanks: to my wife
gifted to all the Armenian children around the world. This translation
has been done in the Grace of the Holy Trinity to whom I owe.
Produced by: Bible for Children
www.M1914.org

BFC
PO Box 3
Winnipeg, MB R3C 2G1
Canada

©2020 Bible for Children, Inc.
License: You have the right to copy or print this story,
as long as you do not sell it.




Յիսուս սիրով
կը պատմէր
ժողովուրդին
Աստուծոյ ներող
ըլլալուն մասին:
Բայց տաճարի
առաջնորդները
կը գանգատէին իր
բարեկամութենէն
մեղաւորներուն
հետ:




Ուրեմն Յիսուս երեք պատմութիւններ պատմեց, որ ցոյց տայ, թէ Աստուած ուրախ կ'ըլլայ երբ մեղաւորները ետ դարձի գան եւ դադրին մեղք գործելէ:

3



Առաջին պատմութիւնը մարդու մը մասին, որ հարիւր ոչխար ուներ: Մէկ հատը կորսուեցաւ: Արագօրէն հովիւը ձգեց ինիսունինը եւ գնաց փնտռելու համար կորսուած ոչխարը:


4



Հովիւը փնտռեց եւ փնտռեց մինչեւ որ գտաւ ոչխարը: Յետոյ իր ուսերուն վրայ առաւ եւ ուրախօրէն տուն տարաւ: Ան իր ընկերներուն պատմեց.


"Հետս ուրախ եղէք, որովհետեւ գտայ իմ կորսուած ոչխարս":

5



Յիսուս բացատրեց, որ մեծ ուրախութիւն կ'ըլլայ երկինքին մէջ, երբ մէկ մեղաւոր ետ դառնայ:

6




Յիսուսի յաջորդ պատմութիւնը կնկայ մը մասին էր, որ տասը արծաթ դրամ ուներ թերեւս իր կեանքի բոլոր հաւաքածը: Յաւալի բան մը պատահեցաւ: Ան իր մէկ արծաթը կորսնցուց:

7



Վա՛յ, վա՛յ, վա՛յ: Կինը ամէն տեղ փնտռեց: Վերջապէս ան գտաւ իր կորսնցուցած արծաթ դրամը: Ան շատ ուրախ էր: Գիտէ՞ք ինչ ըրաւ ան: Այո, ան պատմեց իր բոլոր բարեկամներուն:

8



Նորէն Յիսուս ըսաւ. "Երջանկութիւն կայ Աստուծոյ հրեշտակներուն ներկայութիւնը մէկ մեղաւորի վրայ, որ կը գղջայ":

9

Երրորդ պատմութիւնը, գոր Յիսուս պատմեց տխուր պատմութիւն մըն էր: Ան կը խօսէր տղուն մը մասին, որ իր հօրը տունը ձգեց:




10

Չեռու երկրի մը մէջ տղայ մը իր բոլոր դրամները անխելքօրէն ծախսեց: Չիմա ի՞նչ ընել: Աւելի բարդացնելու համար կացութիւնը, սով ալ կը տիրէ: Տղան անօթի կը մնայ մինչեւ մահ:



11

Յուսախաբ եւ անօթի, տղան խոզեր կերակրելու գործ մը կը գտնէ: Բայց մէկը զինք չի կերակրեր: Ան շատ սիրով պիտի ուտէր խոզերուն կերակուրէն: Թերեւս ալ կերաւ: Վերջապէս տղան ինքզինք կը գտնէ, եւ խելքը կ'աշխատցնէ: "Չօրս տունը, նոյնիսկ սպասաւորները լաւ կ'ուտեն" կը մտածէ:



12

"Ես տուն պիտի դառնամ հօրս ըսելու, որ ներքէ ինծի իմ գործած մեղքերուն համար: Ես այլեւս արժանի չեմ իր տղան ըլլալու: Յուսամ, որ ան զիս իբր սպասաւոր քովը կ'աշխատցնէ":




13

Մինչ տակաւին տղան հեռու էր իր հօր տունէն, անոր հայրը տեսաւ զինք: Ուրախութեամբ լեցուած, հայրը տուն դարձող տղուն քով վազեց: Ան համբուրեց եւ փաթթուեցաւ անոր:



14



"Չայրիկ, ես մեղք գործեցի: Ես արժանի չեմ քու տղադ ըլլալու", Տղան կ'ուզէր, որ հայրը զինք իբրեւ ծառայ քովը աշխատցնէ: "Սակայն հայրը միջամտեց, բերեք ամենալաւ զգեստները եւ ոտնամանները, եւ մատանի իմ տղուս, եւ մեծ խրախճանք պատրաստեցէք":

15

Չաճելի խրախճանք մը սարքուեցաւ տղուն համար, որ կորսուած էր եւ գտնուեցաւ:



Յիսուս, պատմեց այս պատմութիւնը, որպէսզի ցոյց տայ, թէ Աստուած որքան կը սիրէ մեղաւորները, որոնք զղջում կը կատարեն եւ իրեն կը դառնան:

16

Որդին


Աստուծոյ խօսքէն պատմութիւն մը, Սուրբ Գիրքը:

Կը գտնուի հետեւեալին մէջ

Ղուկաս 15

"Քու խօսքիդ մուտքը լոյս կը ցոլացնէ:"
Սաղմոս 119:130

17



45

60

18

Այս Սուրբ Գիրքի պատմութիւնը մեզի կը պատմէ մեր հրաշալի Աստուծոյ մասին, որ մեզ ստեղծեց եւ կ'ուզէ, որ մենք զինք ճանչնանք:

-Աստուած գիտէ, թէ շատ գէշ բաներ ըրած ենք, որոնք ինք մեղք կը կոչէ: Մեղքին պատիժը մահն է, սակայն Աստուած այնքան մեզ կը սիրէ, որ իր Որդին Յիսուսը մեզի դրկեց, որպէսզի խաչին վրայ մեռնի եւ մեր մեղքերուն համար պատժուի: Ետքը Յիսուս համբարձաւ եւ դրախտ՝ իր տունը բարձրացաւ: Եթէ կը հաւատաս Յիսուսին եւ իրմէ կը պահանջես որպէսզի ներքեզի քու մեղքերուդ համար, Ան կը ներէ: Ան կու գայ եւ մեջդ կը բնակի իսկ դուն յաւիտեան իր հետ:

Եթէ կ'ուզես մեղքերդ ազատիլ, հետեւեալը ըսէ Աստուծոյ: Տէր Աստուած ես կը հաւատամ, որ Յիսուս մահացաւ ինծի համար եւ հիմա Ան անգամ մը եւս կ'ապրի: Կ'աղաչեմ, որ գաս իմ կէտնքիս մէջ եւ ներես բոլոր մեղքերս, որպէսզի կարենամ նոր կէտնք մը ապրիլ, եւ օր մը հետդ ըլլամ, յաւիտեան: Օգնէ ինծի որպէսզի քեզի համար ապրիմ քու որդիիդ պէս: Ամէն:

Կարդայ Սուրբ գիրքը եւ ամէն օր Աստուծոյ հետ խօսիր:
Յովհաննու 3:16

19